ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ա.Ս.Զաքարյան

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Մայրենիի դպրոցական դասընթացի ուսուցման համակարգում թերևս ամենակարևորը աշակերտների խոսքի զարգացումն է, պատկերավոր մտածողությունը, լեզվական զգացողություն դաստիարակումը, որին հասնելու ճանապարհին ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների դերը չի կարելի անտեսել:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ են համարվում առածները, ասացվածքները,հանելուկները, շուտասելուկները, սուրասելուկները, սուտասելուկները: Դրանք տարբական դասարանների մայրենիի դասագրքերում հաճախ հանդիպող ժողովրդական պարզ, խիստ հակիրճ, բայց և շատ բովանդակալից ստեղծագործություններ են: Ժողովրդական մանրապատում այս ստեղծագործությունները սերմ ձևակերպված, գեղեցիկ արտահայտված իմաստալից մտքեր ու դատողություններ են, բարոյախրատական սկզբունքներ: Դրանցից յուրաքանչյուրը մեր մտավոր հայացքի առաջ բացում է կյանքի մի ճշմարտություն, պարունակում աշխարհի երևույթների մասին խոր ընդհանրացումներ և իր ձևով ու բովանդակությամբ հայոց լեզվի և հայերենն մտածողության գեղեցիկ օրինակներ տալիս երեխաներին:

Ճիշտ է նկատել Ուշինսկին, որ «Առածը կամ ասացվածքը ձևի տեսակետից մայրենի հարազատ բարբառի կենսաթրթիռ դրսևորում է, որն ուղղակի դուրս է թռչում նրա կենդանի ակունքից՝ ժողովրդի հավերժ ջահել ու հավերժ կենդանի սրտից» (1, -143): Մտածելու և խոսելու ընթացքում, մտքեր արտահայտելու համար մենք ոչ միայն բառեր ենք կապակցում, այլև անհրաժեշտաբար մեր խոսքը համեմում առածներով ու ասացվածքներով, որոնք խոսքը դարձնում են դիպուկ, հետաքրքրական և արտասովոր, նրան տալիս ժողովրդական իմաստության փայլ:

«Այբբենարանում» և «Մայրենիի» դասագրքերում տեղ գտած շուրջ ութսուն առածներն ու ասացվածքները մեծապես նպաստում են աշակերտի խոսքի զարգացմանը: Ժողովրդական առածներն ու ասացվածքներն աչքի են ընկնում իրենց բանաստեղծական լեզվի ու արվեստի բարձր արժանիքներով: Քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, կոնկրետությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը և գունագեղությունը առածների և ասացվածքների մեջ մեծապես նպաստում են երեխաների ոչ միայն լեզվի մշակմանը, այլև տրամաբանական ու պատկերավոր մտածողության զարգացմանը, ուստի դրանք պետք է պատշաճ լրջությամբ ու խորությամբ ուսումնասիրվեն:

Ասացվածքները դիպուկ մտքեր ու դատողություններ են, որոնք արտահայտում են ժողովրդի կենսահայեցողությունն ու կենսափիլիսոփայությունը և ունեն խրատական-դաստիարակչական բովանդակություն: Օրինակ՝ «Ինչքան ծառը պտղակալի, շիվերն այնքան ցած կպահի»(5,էջ 28),«Արհեստը կաթ-կաթ աղբյուր է, եթե չվարաքի, չի էլ պակասի» (5,էջ 143):

Առածներն ունեն այլաբանական նշանակություն, խոսքին տալիս են պատկերավորություն, այն դարձնում հետաքրքրական: Ունենալով երկու կողմ՝ արտաքին՝ գրական-գեղարվեստական և ներքին՝ բարոյախրատական, առածն ունի երկու իմաստ՝ ուղղակի և անուղղակի կամ այլաբանական, որը պահանջում է լուծում և վերծանում, և առանց լրացուցիչ բացատրությունների այն պետք է միանգամայն համապատասխանի երեխայի ուժերին: Օրինակ՝ «Լիքը հասկը գլուխը կախ կպահի» (2, էջ 283) առածի ուղղակի իմաստը հենց այն է, ինչ ասված է, այսինքն՝ լիքը հասկը, հատիկների ծանրությունից, գլուխը կախում է, իսկ այլաբանական իմաստն այն է, որ շատ գիտելիքներ ունեցող մարդը իրեն համեստ է պահում, որը նույնպես մարդկանց դարավոր փորձից եզրահանգված բարոյական կանոն է, կյանքի օրինաչափություն:

Երեխաները հաճույքով են սովորում առածներն ու ասացվածքները, թեև մի փոքր դժվար են ընկալում ու ըմբռնում փոխաբերական իմաստները, սակայն դրանք ամբողջացնում ու լրացնում են նյութը, այն դարձնում մատչելի ու տպավորիչ: Ուսուցիչը պետք է հետևի, որ դաս պատմող յուրաքանչյուր աշակերտ իր խոսքը համեմի օրվա նյութին համապատասխանող առածով ու ասացվածքով:

Երկրորդ դասարանում առածներ չկան, իսկ ասացվածքները թվով քանն են: Ուսուցիչը պետք է հասնի նրան, որ աշակերտները փոքրիկ ստեղծագործական շարադրությունների միջոցով կարողանան բացահայտել այս կամ այն առածի կամ ասացվածքի միտքը:

Դասագրքի յուրաքանչյուր նյութ էլ կարելի է ամրապնդել առածներով ու ասացվածքներով: Այսպես, օրինակ. «Ձոն հարազատ դպրոցին»՝ (2, էջ 4) դպրոցը գիտության դարբնոցն է, «Արջի խրատը»՝ (2, էջ 15) ով մենակ է ուտում, մենակ էլ կխեղդվի, «Ճնճղուկը»՝(2, էջ 28) մայրական սերն ու անձնազոհությունը սահմաններ չի ճանաչում, «Հացը»՝ (2, էջ 40) հաց արարելը սուրբ գործ է, «Երջանիկ խրճիթը»՝ (2, էջ 64) ընտանիքից և հայրենիքից դուրս չկա երջանկություն, «Վաղը ուշ կլինի»՝ (2, էջ 66) այսօրվա գործը վաղվան մի թողիր կամ՝ էգուցվան մնաց, իմացիր՝ կորավ գնաց, «Բաղդադի խալիֆը և իմաստուն ծերունին»՝ (2, էջ 83) երջանկությունը գալիս է նրա մոտ, ով շատ է աշխատում կամ՝ գիտուն մարդը անոթ է, իմաստունը՝ աղբյուր, «Եղնիկ»՝ (2, էջ 101) միայն ձմռանն ենք հիշում, որ եղևնին մշտադալար է, «Լեզուներ»՝ (2, էջ 110) աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է կամ՝ թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա, «Ազգային երգը»՝(2,էջ135) ճշտությունը մշտապես պետք է կրկնել, «Մեծ վարդանը»՝ (2, էջ 170) պատվով մեռնողը փառքով է ապրում, «Ամենափրկիչը»՝ (2, էջ 184) մարդը իր գործով է անմահ, «Ոսկի ձկնիկը»՝ (2, էջ 241) եթե չափի զգացում չունես, ուրեմն՝ ոչինչ էլ չունես կամ՝ ում քիչը չի բավարարում, նրան ոչինչ չի բավարարում: Այս և նման այլ առածներն ու ասացվածքները օգնում են մարդկանց կյանքում գնդեցիկը հաստատելու համար:

Մայրենիի դասագրքերի հանելուկները թերևս երեխաների ամենասիրելի մանրապատում ստեղծագործություններից են: Եթե առածներն ու ասացվածքները իրենց որոշակի սյուժեներով արտահայտում են ընդհանուր կարգի գաղափարներ՝ հետապնդելով գլխավորապես խրատական, բարոյակրթական նպատակներ, ապա հանելուկը արտահայտում է ոչ թե ընդհանուր բնույթի որևէ գաղափար, այլ կոնկրետ որևէ առարկա կամ երևույթ:

Հանելուկների ծագումը շատ հին է և լիովին չի բացահայտված: Դրանք ավանդական բանահյուսության տարրերից են: Այդ ժանրը բնութագրում է ավարտուն ու պարզ բանաձևեր, կուռ, հակիրճ շարադրանք, փոքր ծավալ և սեղմ ձևակերպումներով ներկայացնում է ժողովրդի զարգացման ընթացքը, նրա կացութաձևը, աշխարհայացքը, բարոյահոգեբանական առանձնահատկությունները: Հանելուկը մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղ է, որի ամենապարզ ու նախնական ձևը հարցն է կամ հարց հանելուկը: Օրինակ՝

Այն ի՞նչն է, ի՞նչը.
Դեռ չծագած շողն արևի,
Նա արցունքն է ծաղիկների: (3, էջ 31)

Պատահական չէ, որ առաջին դասարանի «Մայրենի» դասագրքում հանելուկները ամփոփված են«Այն ի՞նչն է,ի՞նչը» խորագրի տակ:

Երեխաների մեջ հանելուկների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով հարկավոր է պատմել, որ հնագույն ժամանակներում հանելուկները ծառայել են որպես երկու անձնավորությունների միջև մղվող մրցախաղ, մտավոր մի յուրօրինակ մենամարտ, երբ պարտվողը դիմացինին հանձնում էր ամենանվիրական բանը, նույնիսկ՝ կյանքը:

Երեխաներին ծանոթ են շատ հրաշապատում հեքիաթներ, որտեղ ամուսնացող աղջկա ծնողները հերոսին հանելուներ են առաջադրում, որի լուծման դեպքում հեքիաթի հերոսը, որպես պարգև, կարող է ստանալ աղջկա ձեռքը և նյութական ժառանգություն:

Դրա վերապրուկներից է, օրինակ, մինչև վերջերս մեր ժողովրդի մեջ պահպանված այն սովորույթը, երբ ամուսնությունից առաջ հարսնացուն և փեսացուն հանելուկներով փորձում էին միմյանց մտավոր ունակությունները: Ղարաբաղի որոշ գյուղերում մինչև 20-րդ դարի կեսերը հարսնացուին հրավիրում էին փեսացուի տուն, որտեղ փեսայի ծնողները խորամանկ հանելուկհարցերով ստուգում էին հարսնացուի մտավոր ունակությունները:

Հանելուկները միշտ ծառայել են մարդկանց խելքն ու հնարամտությունը փորձելու նպատակին: Առաջին դասարանցիների հնարամտությունը կոփելու նպատակով այսպիսի հարց-հանելուկներ են առաջադրված «Այբբենարանում».

Բուի վերջումն է,	կամ Ի՞նչն է, ինչը.
Ուղտի սկզբում,	Հեքիաթի սկզբումն է,
Ուլիկը ունի,	Ճանապարհի վերջում:
Իսկ այծը չունի:	(Հ տառը)
(Ու տառը)	

Տարրական դասարանների «Մայրենի» դասագրքերում զետեղված հանելուկները դասակարգված են ըստ ընդունելով դասակարգման առարկայական եղանակը. «Մայրենի 2» դասագրքի 57-58 էջերում տրված են աշնան բարիքներին վերաբերող հանելուկներ, նույն դասագրքի 135-136 էջերում՝ ձմռանը և ձյունին վերաբերող, որոնք ոչ միայն զարգացնում են աշակերտի միտքը, այլև՝ խոսքը և հարստացնում բառապաշարը: Մայրենիի դասագրքերում զետեղված հանելուկների կապը բնագրերի հետ շատ պարզ ու անմիջական է, և նրանց գուշակումը դժվարություն չի առաջացնում երեխաների մոտ: Մի խումբ հանելուկների պատասխաններն էլ կարելի է գտնել հանելուկներին կից նկարներից (3, էջ 9, 90, 166, 167, 187 և 4, էջ 209, 219, 220):

Քանի որ երեխաների հետաքրքրությունները բավականին մեծ են հանելուկների նկատմամբ, նպատակահարմար է ուսումնական գործընթացի ժամանցներում ոչ միայն

բավարար ուշադրություն դարձնել ծրագրային հանելուկներին, այլև ծանոթ առարկաների, ծաղիկների, կենդանիների վերաբերյալ նոր և ինքնուրույն հանելուկներ հորինել:

Հանելուկներն ունեն ճանաչողական մեծ նշանակություն. Օրինակ՝ 2-րդ դասարանի մայրենիի դասագրքի 209-210 էջերում զետեղված հանելուկները գաղափար են տալիս ոչ միայն արջի, նապաստակի, ընձուղտի, ագռավի, կատվի արտաքին նկարագրության ու բնավորությունների, այլև տարվա եղանակների հետ կապված նրանց մորթու գույնի փոփոխությունների մասին:

Դպրոց նոր ընդունված երեխայի խոսքը հղկված չէ, որոշ երեխաներ կամ շատ արագ են խոսում կամ էլ՝ շատ դանդաղ: Շուտասելուկները նպաստում են տարբեր տեմպերով խոսել սովորեցնելուն և հետապնդում են երկու նպատակ.

ա) ճշտել և ամրապնդել բաղաձայնների արտաբերումը.

բ) տիրապետել տեմպի դանդաղ, միջին, արագ և շատ արագ ձևերին:

Յուրաքանչյուր շուտասելուկ պետք է արտասանել առաջին անգամ դանդաղ, հետո՝ միջին արագությամբ, երրորդ անգամ՝ արագ և չորրորդ անգամ՝ շատ արագ՝ հատուկ ուշադրություն դարձնելով շուտասելուկի մեջ մշակվող այս կամ այն բաղաձայնի արտաբերման մաքրությանը, հստակությանը և բառերի լիահնչունությանը: Մեկ տեմպից մյուսին անցնելու համար պետք է շուտասելուկների վարժություններ կատարել: Օրինակ՝ ռ հնչյունը վատ արտաբերող աշակերտներին կարելի է արտասանել տալ հետևյալ շուտասելուկները. «Ուլը ելավ ուռի ծառը, ուլ տեղովը ուռ ոլորեց, ուռ վեր բերեց», «Արտին մոտիկ մոռ ու մորի, մոռան կատուն կտրորի և այլն»:

Բաղաձայնների արտաբերման վարժություններին պետք է ավելի շատ ժամանակ նվիրել և հիշել, որ բաղաձայնների ճիշտ ու հստակ արտասանությունը կապված է ուղղախոսության հետ:

Շուտասելուկներից տարբերվում են սուրասելուկները, որոնք երեխաներին հասցնում են մեր լեզվի դիպուկությունն ու սրությունը և ունեն ոճական մեծ լիցքավորում. Օրինակ՝ մանրը է, բայց գինը ծանր է:

Ժողովրդական մանրապատումների մի առանձին տեսակ են կազմում սուտասելուկները: Դրանք, ցավոք, մայրենիի դասագրքերում շատ չեն, բայց կարդալու նյութ են համարվում կրտսեր դպրոցականների համար. Օրինակ՝

Քարերի մեջ ցանեցի
Մի քիչ գարի ու կորեկ,
Ուշ աշնանը քաղեցի
Ձմերուկի առատ բերք:
Կատուս սայլին լծեցի
Ու բերքս տուն բերեցի: (3, էջ 52)

Երեխաները փոքրիկ հորինողներ են, և ամեն մի առիթ հմտորեն պետք է օգտագործել նրանց ստեղծագործական ընդունակությունները և խոսքը զարգացնելու, «լեզուն բանալու» և սուտասելուկներ հորինելու համար՝ անպայմանորեն ունենալով չափի զգացողություն:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրություններ առաջ բերելու նպատակով հարկավոր է տարրական դասարանների աշակերտների միջև անցկացնել մրցություններ, երևան հանել մանրապատումների իմացության նրանց մակարդակը և, ինչու չէ, պարգևատրել հաղթող աշակերտին, դասարանին: Երեխաներին պետք է հասկացնել, որ ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից, ճաշակով ու բանիմացությամբ օգտվելու դեպքում, խոսքը դառնում է զարդարուն ու երբագեղ, այն միաժամանակ առաջ է բերում համակրանք օգտագործողի նկատմամբ:

Ամփոփում

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները հանրակրթական դպրոցի տարրական դասարանների մայրենիի դասագրքերում հաճախ հանդիպող ժողովրդական պարզ, խիստ հակիրճ, բայց և շատ բովանդակալից գեղարվեստական այն ստեղծագործություններն են, որոնք նպաստում են աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը, պատկերավոր մտածողությանը, աշակերտի խոսքը դարձնում արտահայտիչ, տրամադրող՝ միաժամանակ դառնալով աշակերտի ձեռք բերած գիտելիքների գնահատման ձև:

Резюме

Произведения устного народного творчества, наиболе часто встречающиеся в учебниках родного языка по-народному простые, слишком сокращенные, однако содержательные-это те художественные произведения, которые способствуют развитию устной речи учащихся, воображения и делают их речь выразительной, одновременно становясь способом оценки приобретенных ими знаний.

Գրականություն

1. Կ.Դ.Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Եր., «Լույս» 1981, -143 էջ:

2. Վ.Ավագյան, Ն.Անտոնյան, Ռ.Խաչատրյան, «Մայրենի 3» հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, «Լույս», 2002, -283 էջ:

3.Ջուլիետա Գյուլամիրյան, Լարիսա Մարտիրոսյան, «Մայրենի 1», հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, «Լույս», 2003, -31 էջ:

4. Ջուլիետա Գյուլամիրյան, Կարինե Թորոսյան, «Մայրենի 2», հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, «Լույս», 2002:

5. Տեր- Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա: Տարրական դասարաններ: Ուս. ձեռնարկ մանկ. քոլեջների համար, Եր., Լույս, 1980-564 էջ:

6. Ս.Բ.Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ. Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1965 :